# Լրագրողներ հանուն ապագայի

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Իշխան Սաղաթելյանին

«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ
նախագահ Սուրեն Դեհերյանից

**Տեղեկություն ստանալու հարցում**

Հարգելի՛ պարոն Սաղաթելյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել մեզ հետաքրքրող տեղեկատվությունը.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում առկա մարզադպրոցների թիվը:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության մարզադպրոցներում գործող հատուկ հաշմանդամային մարզախմբերի թիվը:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ենթակայության մարզադպրոցներում գործող հատուկ հաշմանդամային մարզախմբերի թիվը:
4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության մարզադպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցողների թիվը՝ ընդհանուր եւ ըստ մարզախմբերի:
5. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ենթակայության մարզադպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցողների թիվը՝ ընդհանուր եւ ըստ մարզախմբերի:

Խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Խնդրում եմ Ձեր պատասխան-նամակում առցանց աղբյուր հիշատակելու դեպքում տրամադրել ոչ թե համապատասխան գերատեսչության կայքի հիմնական էջը, այլ մեզ հետաքրքրող տվյալների մասին էջը, քանի որ ոչ միշտ է, որ կայքի կառուցվածքը կամ որոնողական համակարգը մատչելի է անհրաժեշտ տեղեկատվությունը որոնելու համար:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ ampopmedia@gmail.com էլհասցեին:

Կանխավ շնորհակալ եմ,
Սուրեն Դեհերյան,
«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ նախագահ
Ampop.am կայքի գլխավոր խմբագիր
Բջջ.՝ 096204567

21/06/2018թ.